

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՅ-ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Մայիսի 12-ին, մեկօրյա պաշտոնական այցով, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ժամանեց Հայաստան:
Երեւանի «Չվարթնոց» օդանավակայանում Վրաստանի վարչապետին եւ նրա գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, պաշտոնական այլ անձինք:

ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Երեւանում, Բաղրամյանի պողոտայում գտնվող Հայաստանի կառավարության նստավայրում, կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու դիմավորման պաշտոնական արարողությունը: Վրաստանի ղեկավարը՝ Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի ուղեկցությամբ, շրջայցեց պատվի պահակախմբին, որից հետո երկու երկրների կառավարությունների ղեկավարները միմյանց ներկայացրին պատվիրակությունների անդամներին:

Դիմավորման պաշտոնական արարողության ավարտին, կայացավ Իրակլի Դարիբաշվիլու եւ Նիկոլ Փաշինյանի առանձնագրույցը, որի ընթացքում առանձնակի ուշադրություն հատկացվեց երկու երկրների միջեւ առկա հարաբերություններին, մտքեր փոխանակվեցին օրակարգային այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են տրանսպորտային հաղորդակցությունը, էներգետիկան եւ ճանապարհային ենթակառուցվածքը: Հանդիպմանը ընդգծվեց

նաեւ վրաց-հայկական համագործակցությունը առևտրա-տնտեսական, տրանսպորտային, լոջիստիկայի եւ մշակույթի ոլորտներում: Առանձնագրույցին հաջորդեցին երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված կազմով բանակցությունները:

Ավարտին, երկու երկրների կառավարությունների ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՌԱՆՉՆԱԳՐԱՏՈՒԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵՆ ՄԵՋ ՀԱՄԱՐ»

Իր խոսքում Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը ողջունեց Վրաստանի վարչապետին: Նա ընդգծեց, որ երկու երկրների միջեւ բազմակողմ քաղաքական հարաբերությունները հիմնված են պատմական ավանդույթների վրա:
- Վրաստանի Հանրապետության մեծարգո վարչա-



պետ, սիրելի Իրակլի, ողջունում եմ Ձեզ Հայաստանում: Ինձ համար մշտապես մեծ պատիվ է հաճույք է հանդիպել Վրաստանի կառավարության ղեկավարի հետ եւ բարեկամական մթնոլորտում քննարկել մեր երկու երկրների միջեւ համագործակցության օրակարգը:
Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացումն առանցքային տեղ է զբաղեցնում Հայաստանի արտաքին քաղաքա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ՄԵՐ ՊԱՐՏՔԸ Է ՔԱՆԱՅՏԵԼ ՄԵՐ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ, ՀԻՇԵԼ ՆՐԱՆՅՆ ԶԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ



Թբիլիսի. Մայիսի 9-ին Գերմանական ֆաշիզմի դեմ տարած Հաղթանակի 76-ամյակին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, պաշտպանության նախա-

րար Ջուանչեր Բուրժուլաձեն, ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմեշաճուրիին ծաղկեպսակներով զարդարեցին Վետերանների մշակույթի եւ հանգստի (Կիկվիձեի) այգում գտնվող Մելիտոն Բանթարիայի կիսանդրին եւ հարգանքի տուրք մատուցեցին երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված զինվորների հիշատակին:
- Մեր բոլորի պարտքն է միշտ գնահատել մեր վետերաններին, հիշել նրանց հերոսական գործերը եւ հարգանքի տուրք մատուցել նրանց, ովքեր իրենց զոհաբերել են այս մեծ պատերազմում,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:
Նշենք, որ Վրաստանի կառավարության որոշման համաձայն, ֆաշիզմի դեմ տարած Հաղթանակի 76-ամյակի կապակցությամբ պատերազմի մասնակիցները կստանան 1000-ական լարի, իսկ զոհերի ընտանիքներին անդամները կստանան միանվագ սոցիալական օգնություն՝ 500 լարիի չափով:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ «ՀԱՂԹԱՆԱԿ» ԶԲՈՍԱՅԳԻ ԵՎ «ԵՌԱԲԼՈՒՐ» ՊԱՆԹՈՆ



ԵՐԵՎԱՆ.
Մայիսի 9-ին, Հաղթանակի ու խաղաղության տոնի եւ Հայրենական մեծ պատերազմում Հաղթանակի 76-ամյակի առիթով Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը եւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը, օրենսդիր ու գործադիր մարմնի անդամների ուղեկցությամբ, այցելեցին «Հաղթանակ» զբոսայգի եւ «Եռաբլուր» պանթոն:
Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը ծաղիկներ խոնարհեց Անհայտ զինվորի հուշարձանին ու հարգանքի տուրք մատուցեց Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման պայքարում զոհված հերոսների հիշատակին:
(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է



ՌԵՎԱԶ ԲԱՆՆՉԻՎԱԶԵ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԻ, «ՎՐԱՍՏԱՆ»
Բատոն Վան, շնորհավորում եմ «Վրաստան» թերթի մեկօրյա հոբելյանը: Այն հիմնվեց անցյալ դարի 20-ական թվականներին, որպես հայալեզու թերթ, որը Վրաստանում ապրող հայերին մայրենի լեզվով տեղեկատվություն է ներկայացնում Վրաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի հետաքրքիր փաստերի եւ իրադարձությունների մասին:
Անցած 100 տարիների ընթացքում թերթը աչքի է ընկնում օբյեկտիվությամբ, սկզբունքայինությամբ եւ ճշմարտության ներկայացման սկզբունքով: Թերթն առանձնակի արհեստավարժ ու գործուն դարձավ Ձեր խմբագրության օրոք:
Դուք՝ որպես տաղանդավոր անձնավորություն, հիանալի հրապարակախոս եւ լրագրող, բարձր արհեստավարժ մակարդակով հետաքրքիր տեղեկատվություն եք ներկայացնում ձեր թերթի ընթերցողներին,
(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ԱՐԱՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՄ ՀԱՐԱԶԱՏ, ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ «ՎՐԱՍՏԱՆ»
Մեծ ուրախությամբ եւ խորին հարգանքով շնորհավորում եմ մեկօրյա պատմություն ունեցող մեր հարազատ «Վրաստան» թերթի 100-ամյա հոբելյանը:
Եթե ուշադիր հետեւենք խորհրդային տարիների թերթում լույս տեսած հոդվածներին, անպայման կնկատենք վերջին տարիների թերթի բովանդակության արմատական փոփոխությունը՝ զգալի նվաճումներով ու ներքին կյանքում կատարված վերափոխումներով:
Թերթը կարողացել է դիմադրել այն բոլոր քաղաքական արհավիրքներին, որոնք քաջ հայտնի են մեր ընթերցողներին:
Հիշելով այն մղձավանջային տարիները, երբ մեր Հայրենիքը գտնվում էր ինչպես տնտեսական, այնպես էլ՝ սոցիալական ու հոգեբանական ծանր վիճակում, «Վրաստան» թերթի խմբագրությունը
(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

COVID - 19

ԺԱՄԱՆԱԿԻՆ ԳՐԱՆՑՎԵՔ ԵՎ ԱՆՑԵՔ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

Գործում է 1522 թեժ գիծը, որը ցանկացողներին հնարավորություն է ընձեռում հեռախոսով զրանցվել կորոնավիրուսի դեմ պատվաստման համար: Վերոնշյալ թեժ գիծը քաղաքացիներին կարող է վերահասցեագրել նաեւ հասարակական անվտանգության կառավարման կենտրոն՝ 112 եւ միասնական կառավարական թեժ գիծ՝ 144:
Միջգերատեսչական համակարգող խորհուրդը մշտապես վերահսկում է հակահամավարակային իրավիճակի միտումները եւ, համավարակային իրավիճակի կարգավորման առաջին իսկ նշանների դեպքում, կքննարկվեն առկա կարգավորումների մեղմացման հնարավորությունները: Միջգերատեսչական համակարգող խորհուրդը քաղաքացիներին կրկին անգամ կոչ է անում օգտագործել դիմակներ ու պահպանել սոցիալական հեռավորություն:



ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԱԾԱՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



կանության մեջ:

Վերջին շրջանում կորոնավիրուսի պատճառով մեր շփումները բարձր մակարդակով մի փոքր դանդաղել էին: Ուրախ եմ, որ հիմա վերականգնում ենք բարձր մակարդակի փոխայցերը: Երկկողմ հարաբերությունների մեր օրակարգը շատ լայն է՝ սկսած տրանսպորտային հաղորդակցություններից, ավարտած էներգետիկայով, հաղորդակցության ուղիներով: Իհարկե, կորոնավիրուսի դեմ պայքարը նույնպես մեր համատեղ օրակարգի կարևոր հարցերից է:

Մեր երկրների քաղաքական հարաբերություններն ավանդաբար ջերմ են և հիմնված մեր ժողովուրդների, մեր երկրների պատմական բարեկամության և եղբայրության վրա: Մեր օրակարգում, կարծում եմ, ունենք և պետք է քննարկենք նաև տարածաշրջանի իրադրությանը և հեռանկարներին վերաբերող հարցեր, փորձենք համադրել մեր պատկերացումները՝ իհարկե, խորացնելով մեր ավանդական կապերը քաղաքական, տնտեսական, հումանիտար, մշակութային ուղղություններով: Եվ, իհարկե, մեր երկրներն ու ժողովուրդները պետք է աջակցեն իրար՝ մեր պետությունների բարեկեցությունն ու զարգացումն ապահովելու գործում:

Մեր երկու ժողովուրդները միախուսված են բազմաթիվ թեմաներով: Մեր դարավոր բարեկամությունը, ինչպես նաև ժողովրդավարության և օրենքի գերակայության ընդհանուր արժեքները կազմում են այն ամուր հենքը, որի վրա խարսխված է մեր երկու պետությունների գործընկերությունը:

Վրաստանի հայ համայնքը, որը բազմադարյա պատմություն ունի, այն կամուրջն է, որն էլ ավելի ամուր է կապում մեր երկու երկրները: Մենք ունենք դիմամիկ զարգացող համագործակցության լայն օրակարգ: Այն ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ:

Ստեբեր փոխանակեցինք մեր երկրներում համավարակի դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ:

Իմ վրացի գործընկերոջ հետ անդրադարձանք նաև տարածաշրջանային անվտանգության հարցերին:

Մեզ համար աներկբա է, որ հայ-վրացական գործընկերությունը մեր տարածաշրջանում կայունության ապահովման կարևորագույն երաշխիքներից է:

Կրկին ողջունում եմ Ձեզ և համոզված եմ, որ այսօր մենք արդյունավետ բանակցություններ կունենանք, հայտարարեց Հայաստանի վարչապետի պաշտոնակատարը:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ ԴՐԱՑԻԱԿԱՆ, ԱՅՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ»

Իր պատասխան խոսքում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիքաշվիլին շնորհակալություն հայտնեց հյուրընկալության համար:

- Պարոն վարչապետ, Դուք հիշատակեցիք կորոնավիրուսի համավարակը, որ բոլոր երկրներին էլ ժողովուրդներին առնչվեց: Չնայած, ես մեծ պատվով եւ հարգանքով եկա ու հյուրընկալվեցի: Մեր ժողովուրդների միջեւ, ինչպես գիտենք, բարեկամական կապեր են, ոչ

միայն զուտ դրացիական: Մեր հարաբերություններն ու բարեկամությունն ունեն դարերի պատմություն, եւ մենք շահագրգռված ենք, որ Հայաստանում եւ ողջ տարածաշրջանում լինի խաղաղություն, կայունություն, զարգացում: Դուք հիշատակեցիք նաև մեր այսօրվա օրակարգը, որը կարող է լինել բազմակողմանի: Մենք պետք է քննարկենք՝ ինչպես զարգացնենք մեր առեւտրատնտեսական եւ մշակութային հարաբերությունները, այնպիսի հարցեր, ինչպիսին տրանսպորտն է, լոգիստիկան: Այս հարցերը մեզ էլ՝ ավելի կմերժեցնեն, իհարկե, նաև տարածաշրջանային պրիզմայով:

Վրաստանը միշտ եղել է Հարավային Կովկասում խաղաղ համագործակցության ու համագոյակցության կողմնակից, եւ այս կուրսը կշարունակվի հետագայում: Մենք պատրաստ ենք նպաստել տարածաշրջանային երկխոսություն վարելուն եւ զարգացնել տնտեսությունը, առեւտուրը: Հենց կայունության, խաղաղության, ժողովրդավարական արժեքների ամրապնդման նպատակով է վրաց ժողովուրդը ընտրել եվրոպական եւ եվրատլանտյան ուղին:

Հայաստանի կայունությունն ու ժողովրդավարական զարգացումն անչափ կարևոր են Վրաստանի եւ ամբողջ տարածաշրջանի համար: Մենք համոզված ենք, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն բաց ու թափանցիկ, եւ հայ ժողովուրդը մեկ անգամ եւս ցույց կտա աշխարհին իր հավատարմությունը ժողովրդավարության սկզբունքներին:

Մենք պատրաստակամություն հայտնեցինք հանդիպումները շարունակել, բարձր մակարդակի փոխայցերությունների դիմամիկ պահել եւ նպաստել ոլորտային գերատեսչությունների համագործակցությանը, հայտարարեց Իրակլի Ղարիքաշվիլին:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՋԵՆՅԱՑԻ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիքաշվիլու Երեւան կատարած պաշտոնական այցի շրջանակներում վրաց-հայկական պաշտոնական պատվիրակության ընդլայնված կազմով բանակցություններին կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգության հարցեր: Երկուստեք ընդգծվեց, որ թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը շահագրգռված են տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանմամբ, ինչը կարևոր է



համագործակցության զարգացման տեսանկյունից:

Ձրուցակիցները եւս մեկ անգամ գոհունակությամբ փաստեցին վրաց-հայկական հարաբերությունների դարավոր բարեկամության բնույթը, որն ամուր հիմք է բարեկամության եւ փոխշահավետ գործակցության խորացման համար:

Վրաստան-Հայաստան առեւտրատնտեսական կապերի խթանման համատեքստում կարևորվեց տրանսպորտային կոմունիկացիաների, ներառյալ՝ երկաթուղային ենթակառուցվածքների զարգացումը: Կողմերը հետաքրքրություն են հայտնել այս ուղղությամբ համատեղ մեր ծրագրեր նախաձեռնելու հարցում եւ պայմանավորվել ինտենսիվ աշխատել: Երկուստեք հեռանկարային համարվեց փոխգործակցության հնգակողմ Հայաստան-Վրաստան-Բուլղարիա-Հունաստան-Իրան ձեւաչափը եւ «Պարսից ծոց-Սեւ ծով միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման մասին» համաձայնագրի նախագծի շուրջ ակտիվ աշխատանքը:

Նիկոլ Փաշինյանն ու Իրակլի Ղարիքաշվիլին անդ-

րադարձել են նաև կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումների հարցին եւ փոխանակվել դրանց վերացման ուղղությամբ կատարվող քայլերի վերաբերյալ տեղեկատվությամբ:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐԻ ՀԻՇՏԱՍԿԻՆ

Հայաստան կատարած պաշտոնական այցի մեկնարկին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիքաշվիլին Շիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մա-



տուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Վրաստանի կառավարության ղեկավարը, պատվիրակության անդամների հետ միասին, ժողովուրդի խոնարհեց հուշահամալիրում, ինչպես նաև ջրեց «Հիշատակի պուրակում» նախկինում իր տնկած եղևնին:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ԵՎ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԶԵՎԱԶԱՓԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԵՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիքաշվիլու Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի պատվիրակության անդամ, Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին հանդիպում ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Արա Այվազյանի հետ:

Վերահաստատվեց փոխադարձ հանձնառությունը՝ քայլեր ձեռնարկելու առկա ավանդական բարիդրացիական հարաբերություններին նոր դիմամիկա հաղորդելու եւ փոխադարձ հետաքրքրությունները ներկայացնող ոլորտներում համագործակցությունը որակապես նոր մակարդակի բարձրացնելու ուղղությամբ: Այս առնչությամբ կարևորվեց երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ ոլորտային խորհրդակցությունների պարբերական անցկացումը:

Հայաստանի գերատեսչությունների ղեկավարների հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային անվտանգության եւ փոխկապակցվածության հարցերին:

ՎԵՐԱՂԱՐԶ ԹԲԻԼԻՍԻ

Մայիսի 12-ին, Հայաստան կատարած մեկօրյա պաշտոնական այցի ավարտին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիքաշվիլին վերադարձավ Թբիլիսի:

Երեւանի «Ջվարթնոց» օդանավակայանում Վրաստանի վարչապետին եւ պատվիրակության անդամներին ճանապարհեցին Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, պաշտոնական այլ անձինք:

Երեւանում, Իրակլի Ղարիքաշվիլու պաշտոնական այցի շրջանակներում, անցկացված բոլոր միջոցառումներին ու հանդիպումներին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սահրյանն ու Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սազանելիձեն:

ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԱՍԼՈ ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԱՍԼՈ ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅՈՒ ԼՅՈՒՍԻՄԱՅԻՆ ՄԱԿԵՂՈՆԻԱ

Մայիսի 10-11-ը Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Յուսիսային Սակեդոնիայում:

Պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Յուսիսային Սակեդոնիայի Հանրապետության նախագահ Ստեփան Գեորգիադիսովի, Վեհաժողովի նախագահ Խտալատ Ջաֆերիի եւ փոխվարչապետ Արտան Գրուբիի հետ:

Վրաստանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությանը, որը տեղի ունեցավ «Վիլլա Վոդնո»-ի նախագահական պալատում, հաջորդեց Սալոմե Ջուրաբիշվիլու եւ Յուսիսային Սակեդոնիայի Հանրապետության նախագահի հանդիպումը,

որից հետո կայացավ ընդլայնված կազմով հանդիպում:

Պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվեց երկու փաստաթուղթ՝ Վրաստանի ու Յուսիսային Սակեդոնիայի կառավարությունների միջեւ համաձայնագիր մուտքի արտոնագրերի չեղարկման մասին եւ Յուսիսային Սակեդոնիայի հետ մշակութային համագործակցության հուշագիր:



ԳՈՐԾԱԴԻՐ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՎԱՐՉԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԳՆՈՂ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ

Մայիսի 10-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Գաթիբաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց կառավարության հերթական նիստը, որտեղ քննարկվեց օրակարգում ընդգրկված 13 հարց:

Նիստին գործադիրը որոշում ընդունեց որոշակի արտոնություններ սահմանել այն ֆերմերներին, ովքեր ցանկանում են գնել վարձակալված հողամասեր:

Համեմատաբար փոքր հողատարածքներ վարձակալած ֆերմերները կարողանան այն գնել 25 տոկոս զեղչով: Որոշումը կվերաբերի մինչև 2000 ֆերմերի:


Որոշման նպատակն է բարձրացնել գյուղատնտեսական նշանակության հողերի մատչելիությունը, ինչը կնպաստի տնտեսության զարգացմանն ու զբաղվածությանը:

Օրակարգում ընդգրկված հարցերի շրջանակներում, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Իրակլի Քարսելաձեն կառավարության ղեկավարին տեղեկացրեց «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի ընթացքի մասին:

«Նորացված շրջաններ» անախադեպ ծրագիրը, որն իրականացվում է վարչապետ Իրակլի Գաթիբաշվիլու նախաձեռ-



նությամբ, ընդգրկում է Վրաստանի 63 մունիցիպալիտետներ, եւ միայն առաջին փուլի մոտավոր արժեքը 500 միլիոն լարի է: Ծրագիրը նախատեսում է մարզերի ուրբանային նորացում, ինչը ենթադրում է պետական, մունիցիպալ եւ մասնավոր նշանակության օբյեկտի զարգացում:



ԻՍՐԱՅԷԼ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾԵՑ ՀՐԹԻՈՒՅԻՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ

Մայիսի 10-ին Իսրայելի իրավապահ մարմինների աշխատակիցները, ահաբեկչության փորձի կանխման պատրվակով, Երուսաղեմի Ալ Աքսա մզկիթից ուժով դուրս են արել աղոթք անող ծխականների, ինչը վերածվել է ընդհարման, արդյունքում տուժել են 612 պաղեստինցի եւ մի քանի տասնյակ իրավապահ:

Սզկիթի մոտ տեղի ունեցած միջադեպը հանգեցրել է լայնածավալ ընդհարման Իսրայելի եւ Պաղեստինի զինված ուժերի միջև:

Երկուշաբթի օրվանից Իսրայելի տարածքի, թեև Ավիվի եւ Բեեր Շեւայի ուղղությամբ Գազայի հատվածից բաց է թողնվել ավելի քան 200 հրթիռ: Իսրայելի բանակը ներգրավել է 5 հազար պահեստազորայինի:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԶԻՆԱՂԱԴԱՐԻ ԱՈՍՁԱԿԸ ՄԵՐԺՎԵՑ

Իսրայելը մերժել է Գազայի հատվածում հումանիտար զինադադար ձեռք բերելու վերաբերյալ եզրփոխի պատվիրակության խնդրանքը:

Իրադրությունը Իսրայելի եւ Գազայի հատվածի սահմանին լարված է մնում արդեն մի քանի օր: Մայիսի լույս 14-ի գիշերն Իսրայելի ռազմաօդային եւ ցամաքային ուժերը սկսել են Գազայի հատվածի զանգվածային զնդակծությունը, ՀԱՄԱՍ-ը ի պատասխան վերսկսել է Իսրայելի գնդակծությունները: Ըստ վերջին տվյալների, երկուշաբթի օրվանից՝ մայիսի 14-ից, Իսրայելում զոհվել է յոթ մարդ, Պաղեստինում՝ 113, այդ թվում՝ 31 երեխա:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱԶՆԱԻ ԴՊՐՈՑՈՒՄ, ԿԱՆ ԶՈՐԵՐ

Մայիսի 11-ին Կազանի թիվ 175 դպրոցում հնչած կրակոցների արդյունքում, սպանվել է 7 երեխա եւ 2 ուսուցիչ, եւս 23 մարդ վիրավորվել է: Հանցագործը դպրոցի մայրսրահի սան, 19-ամյա Իլնազ Գալյա-վիեն է:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԻՐԱՎԻ ԿՈՒՐՍԻՅԵ. «ԱՅՄՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՆՆ ԱՐԴԵՆ ՀԱՂԹԱՅԱՐՎԵԼ Է»



«Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ Վրաստանի խորհրդարանում ընդդիմությունը ներկայացվեց՝ այսպես կոչված արհեստական ճգնաժամն արդեն հաղթահարված է:

- Ընդդիմությունն արդեն ներկայացված է Վրաստանի խորհրդարանում: Գլխավորն այն է, որ խորհրդարանը պատշաճ կերպով համալրվի, համապատասխան համաձայնագիրը ստորագրվել է Եվրամիության

հովանու ներքո: Այս ամբողջ արհեստական ճգնաժամն արդեն անցյալում է: Հետեւաբար, եթե «Ազգային շարժումը» խորհրդարան կմտնի, թե՛ ոչ, ոչ մեկի համար նշանակություն չունի ո՛չ սուբյեկտիվ, ո՛չ օբյեկ-

տիվ պատճառներով: Վրացական ժողովրդավարության համար կարող է ավելի լավ լինել, եթե «Ազգային շարժումը» չներկայացվի, - հայտարարեց «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն:

ՍՏԵՂԾՎԵԼ Է 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վրաստանի խորհրդարանում կառավարող եւ ընդդիմադիր խմբակցությունների միջև ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ ստեղծելու 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ուսումնասիրող ժամանակավոր հետաքննչական հանձնաժողով:

Հանձնաժողովը կղեկավարի «Վրացական երազանքից» համամասնական պատգամավոր Գիվի Միքանաձեն: Հանձնաժողովի քարտուղար է ընտրվել «Հայրենասերների ալյանսի» ցուցակով համամասնական պատգամավոր Դավիթ Ջիլֆիմիանին: Բացի այդ, որոշում ընդունվեց հանձնաժողովի գործունե-

ության ժամկետը մեկ ամսով երկարաձգելու մասին, քանի որ դրա եռամսյա ժամկետը լրանում է մայիսի 17-ին: Մեծամասնության անդամները նշել են, որ պետք է վերջ տալ ընդդիմության կողմից ընտրակեղծիքների մասին պնդումներին, եւ հանձնաժողովը դրա համար լավ ձեւաչափ է:

ՁԵՎԱՎՈՐՎԵՅ ԱՌԱՆՁԻՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԽՄԲԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, խորհրդարանական աշխատանքին բոյկոտ հայտարարած ընդդիմադիր 9 կուսակցություններից վեցը, առանձին պայմանների բավարարման դիմաց օրենսդիր մարմնի աշխատանքին մասնակցելու պատրաստակամություն հայտնեցին:

Բոյկոտը շարունակում են Միասնական ազգային շարժումը, «Եվրոպական Վրաստան» ու «Հայրենասերների ալյանսը» (բոյկոտի ռեժիմում է գտնվում նաեւ

խորհրդարանական մեկ մանդատ ունեցող Լեյբորիստական կուսակցությունը): Մայիսի 13-ին հայտնի դարձավ, որ «Լեւոն» հանուն Վրաստանի» կուսակցությունը

խորհրդարանում «Լեւոն» գործընկերություն հանուն Վրաստանի» անվամբ խմբակցություն է ստեղծում: «Լեւոն» չորս տեղ ունի խորհրդարանում, եւ նրանց խմբակցությանը միացել են Սալոմե Սամադաշվիլին, Արմազ Ախվլեդիանին եւ Շավլա Շավգուլիձեն: Խմբակցությունը կգլխավորի Բադրի Ջափարիձեն, իսկ տեղակալը կլինի Սալոմե Սամադաշվիլին:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ 13-ԻՑ ՍԿԱՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՄԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության տարածած տեղեկատվության համայնքում, մայիսի 13-ից սկսվեց առաջին դասարանցիների գրանցման երրորդ փուլը, որը կավարտվի հունիսի 5-ին:

Գերատեսչության հաղորդմամբ, գրանցումն իրականացվում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի registration.emis.ge պաշտոնական կայքում, եւ այն իրականացնելու է երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը:

Նախարարության mes.gov.ge-ով տրված է առաջին դասարանցիների համընդհանուր գրանցման ցուցումը, ըստ որի, էլեկտրոնային ձեւով գրանցված աշակերտի ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու են հունիսի 8-22-ը: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, գրանցումն ավտոմատ կերպով կչեղարկվի:

Կրթության նախարարության հաղորդմամբ, գրանցման վերջին չորրորդ փուլը, դպրոցներում կիրականացվի հունիսի 24-ից հուլիսի 10-ը: Այդ փուլում ազատված կան մնացած տեղերում կկարողանան գրանցվել այն երեխաները, որոնք չեն կարողացել գրանց-

վել՝ առաջին, երկրորդ եւ երրորդ փուլերում կան ցանկանում են փոխել գրանցումը: Այս փուլում աշակերտների գրանցումն ապահովվում է հանրային դպրոցը՝ հիմնվելով ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի վրա:

Երկրում կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով, ծնողները կարող են էլեկտրոնային ձեւով դիմումներ ուղարկել կցված փաստաթղթերով, կամ դպրոցի կողմից սահմանված անվտանգության կանոններին համապատասխան, նյութապես ներկայացնել դպրոցի տնօրինությանը: Դպրոցը ծանուցում է ծնողին էլեկտրոնային փոստով դիմումն ու փաստաթղթերը ստանալու պահից երկու օրվա ընթացքում:

Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային ձեւով ներկայացնելու դեպքում, դպրոցը չի պահանջում փաստաթղթերը նյութական ձեւով, եւ հաստատելու

է աշակերտի ընդունումը օրենքով սահմանված ժամկետում:

Հանրակրթական ուսումնական հաստատությունները պետք է առաջնորդվեն Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի 2007 թվականի օգոստոսի 16-ի՝ «Վրաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N675 հրամանով եւ չպետք է պահանջեն լրացուցիչ փաստաթղթեր, որոնք ընդգրկված չեն օրենքում:

Վրաստանի հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան աշակերտի ընդունման համար, հարկավոր է ներկայացնել հետեւյալ անհրաժեշտ փաստաթղթերը. աշակերտի օրինական ներկայացուցչի դիմումը, որը պետք է պարունակի տեղեկություններ աշակերտի ներկայացուցչի բնակության վայրի եւ հեռախոսի վերաբերյալ: Օրինական ներկայացուցչի նույնականացման քարտի եւ Վրաստանում կեցության իրավունքի փաստաթղթի պատճենները (առկայության դեպքում): Աշակերտի ծննդյան վկայականի կամ անձը հաս-



տատող փաստաթղթի եւ Վրաստանում կեցության իրավունքի փաստաթղթի պատճենները (առկայության դեպքում):

Փաստաթղթերը օտար լեզվով ներկայացնելու դեպքում, դրանք պետք է ուղեկցվեն վրացերեն թարգմանությամբ, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կանոններին համապատասխան:

Կրթության նախարարությունը ծնողներին հորդորում է ուշադիր կարդալ գրանցման ժամկետներն ու պայմանները, որպեսզի կարողանան իրենց երեխային ժամանակին եւ ճիշտ գրանցել դպրոցում: Հանրային դպրոցի էլ. փոստի հասցեները տրված են mes.gov.ge կայքում:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳԻՐՔ

ԸՆՏՐԱՕՐԵՆՔԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԹԵՄԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ



Մայիսի 10-ին Կազրեթի «Ամբաստոր» հյուրանոցում անցկացվեց իշխանության եւ ընդդիմադիր այն կուսակցությունների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպումը, ովքեր բոլորտի ռեժիմում էին եւ վերջում համաձայնեցին ստորագրել Շառլ Միշելի փաստաթուղթը: Հանդիպմանը ներկա էին նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատանքային խումբն ընտրական օրենսդրությունում պետք է արտացոլի այն համընդարարականները, որոնք ընտրական բարեփոխումների համար տրվել են Վենետիկի հանձնաժողովի եւ ԵԱՀԿ/ՕԴԻԻ-ի կողմից: Բացի այդ, նրանում պետք է նախատեսվեն Շառլ Միշելի փաստաթղթում դրված կետերը:


«Ռազմավարությունը՝ Աղմաշենբեյլի-ի» առաջնորդ Գիորգի Վաշաձեն հայտարարել է, որ ընտրական բարեփոխումների վերաբերյալ համաձայնվել են, որ անձը հաստատող նախկին վկայականներով ընտրություններին մասնակցություն այլեւս չի լինի:

Ինչպես նաեւ այն, ինչի շուրջ մենք արդեն սկզբունքորեն պայմանավորվել ենք: Այլեւս չի լինի անձը հաստատող հին վկայականով ընտրություններին մասնակցություն: Ընտրությունները կկայանան «Այ Դի» (ID) քարտերով, ինչն արդեն իսկ շատ լավ ձեռքբերում է, հայտարարեց Գիորգի Վաշաձեն:

Հանդիպմանը քննարկվեցին ընտրական վարչակազմի համալրման եւ ընտրական քարտարշավի անցկացման առնչվող հարցեր: Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների խոսքով, իրենք մոտ 40 առաջարկ են ներկայացրել աշխատանքային խմբին:

2021 թվականի մարտին, աշխատանակ տարիքի տղամարդկանց կենսապահովման մակարդակը 201,0 լարի էր, իսկ ապրիլին այս ցուցանիշն ավելացել է 1 լարի եւ 80 քեթրիով՝ կազմելով 202,8 լարի: Մարտի համեմատ, ապրիլին միջին սպառողի կենսապահովման մակարդակն աճել է 1,5 լարիով եւ կազմել 179,6 լարի:

Վիճակագրության ազգային ծառայությունը կենսապահովման մակարդակը սահմանում է՝ հիմնվելով սննդի նվազագույն զանրուղի վրա: Նվազագույն պարենային զանրուղը պարունակում է սննդամթերքի այն քանակը, որը ֆիզիոլոգիապես անհրաժեշտ է աշխատունակ տարիքի տղամարդու բնականոն կյանքի եւ աշխատունակության համար: Կենսապահովման պարենային զանրուղը բաղկացած է 40 ապրանքից՝ հաց, հացահատիկային մշակաբույսեր, միս, կաթնամթերք, բանջարեղեն եւ հրուշակեղեն:



ՆԻԿԱ ՑԻՎԱՐԱՇՎԻԼԻՆ՝ ՀԱՏՈՒԿ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ



Նիկա Ցիվարաշվիլին կզլխավորի Վրաստանի արդարադատության նախարարության հատուկ քրեակատարողական ծառայությունը, իսկ նրա տեղակալ է նշանակվել Գիորգի Գիորգաձեն:

Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեի խոսքով, Նիկա Ցիվարաշվիլին քրեակատարողական համակարգում փորձառու եւ արհեստավարժ կադր է, ինչը գերատեսչությունը կդարձնի ավելի արդյունավետ եւ մարդու իրավունքների առավելագույն պաշտպանության վրա կենտրոնացած:

20 ԱՄԵՆԱԳԱՆՑ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Եվրամիության եւ Միգրացիայի միջազգային կազմակերպության համատեղ իրականացրած ծրագրի շրջանակներում, տեղի է ունեցել Վրաստանի սահմանային ոստիկանությանը 30 արտաճանապարհային տրանսպորտային միջոցների հանձնման արարողությունը:

«Ամենագնացների այս խմբաքանակը 40 միավորից բաղկացած ավելի մեծ փաթեթի մաս է կազմում, որից առաջին 10-ը Վրաստանին են փոխանցվել 2020-ի նոյեմբերին: Այս տեխնիկական կնպաստի սահմանին ապօրինի գործողությունների բացահայտմանը եւ կբարելավի սահմանապահների պարեկային ու պատասխան գործողությունները», - հայտնել են ԵՄ ներկայացուցչությունից:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆՈՒՄ ԱՎԵԼԱՑԵԼ Ե ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ

Ազգային վիճակագրության ծառայության տվյալներով, 2021 թվականի ապրիլին, մարտի համեմատ, Վրաստանում ավելացել է կենսական նվազագույնի մակարդակը:

2021 թվականի մարտին, աշխատանակ տարիքի տղամարդկանց կենսապահովման մակարդակը 201,0 լարի էր, իսկ ապրիլին այս ցուցանիշն ավելացել է 1 լարի եւ 80 քեթրիով՝ կազմելով 202,8 լարի: Մարտի համեմատ, ապրիլին միջին սպառողի կենսապահովման մակարդակն աճել է 1,5 լարիով եւ կազմել 179,6 լարի:

Վիճակագրության ազգային ծառայությունը կենսապահովման մակարդակը սահմանում է՝ հիմնվելով սննդի նվազագույն զանրուղի վրա: Նվազագույն պարենային զանրուղը պարունակում է սննդամթերքի այն քանակը, որը ֆիզիոլոգիապես անհրաժեշտ է աշխատունակ տարիքի տղամարդու բնականոն կյանքի եւ աշխատունակության համար: Կենսապահովման պարենային զանրուղը բաղկացած է 40 ապրանքից՝ հաց, հացահատիկային մշակաբույսեր, միս, կաթնամթերք, բանջարեղեն եւ հրուշակեղեն:

ԻՐԱՎԱԿԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԸՆՐԾՄԱՆ» ՆԱԽՏՎԱԶԸ ԳՐԱՎԻ ԴԻՄԱՅ ԼԵՏՅ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ

Մայիսի 10-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը բավարարեց դատախազության միջնորդությունը. «Ազգային շարժման» նախագահ Նիկա Մելիայի խափանման միջոցը՝ բանտարկությունը, գրավով փոխելու վերաբերյալ:

Նշենք, որ ըստ ընթացիկ տարվա ապրիլի 19-ի, Եվրամիության միջնորդությանը ձեռք բերված համաձայնության, Նիկա Մելիային նախնական կալանքից ազատելու դիմաց սահմանված 40 000 լարիի չափով գրավը, մայիսի 8-ին հատկացրել է «Եվրոպական հիմնադրամը ժողովրդավարության համար» կառույցը:

Հիշեցնենք, Նիկա Մելիային Թբիլիսիի քաղաքային դատարանը 2019 թվականի հունիսի 27-ին սահմանել էր 30 000 լարի գրավ եւ լրացուցիչ սահմանափակող միջոցներ, ներառյալ՝ էլեկտրոնային մոնիթորինգը: Սակայն, 2020 թվականի նոյեմբերի 1-ին Նիկա Մելիան հանցե էլեկտրոնային մոնիթորինգի ապարանջանը հանրահավաքի ժամանակ: Դատախազությունը պահանջեց խստացնել խափանման միջոցը: Ըստ դատարանի 2020 թվականի նոյեմբերի 3-ի որոշման, Նիկա Մելիայի նկատմամբ

խափանման միջոց գրավի չափը դարձավ 40 000 լարի: Մելիային 50 օր ժամանակ էր տրվել վճարելու համար, բայց «Ազգային շարժման» նախագահը գրավը չհամաձայնեց վճարել, որի պատճառով դատախազության միջնորդության հիման վրա, ընթացիկ տարվա փետրվարի 17-ին Նիկա Մելիային դատարանը սահմանեց կալանքը:

Նիկա Մելիային մեղադրանք է առաջադրվել Վրաստանի քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով, որը նախատեսում է խմբային բռնության կազմակերպում, ղեկավարում եւ մասնակցություն:

ՏԱՐԵՔ

ՍԱՌՆԱՄԱՆԻՔ՝ ՆԻՆՈՇՄԻՆԱԴԱՅՈՒՄ, ԱՆԱԼՔԱԼՔԻՈՒՄ, ԿԱՐԿՈՒՑ՝ ՄԻՎԻԼԻՄԻՈՒՄ ԵՎ ՍԱՄՇՎԻԼԳԵՈՒՄ

ՈՉ ՆՈՐՄԱԼ ՑՐՏԵՐԻՑ ԵՎ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՀԵՏՈ՝ ԱՍԱՌԱՅԻՆ ՇՈԳԵՐ

Ընթացիկ տարվա մայիսը վերածվեց եղանակային անակնկալների: Մայիսի 7-12-ի ջերմաստիճանային անկումից, արտասովոր ցրտերից, հորդառատ անձրևներից, ջրհեղեղներից հետո, «գարունը» անսպասելի կերպով իր տեղը զիջեց «ամռանը»՝ մինչև 30 աստիճանի հասնող ջերմությամբ:

Մայիսի սկզբներին ողջ երկրի տարածքով ջերմաստիճանի անկումն առանձնակի զգալի էր բարձրալեռ բնակավայրերում, մասնավորապես՝ Նինոծմինդայի, Ախալքալաքի, Ախալցխի մունիցիպալիտետներում:

Մայիսյան ձյան եւ սառնամանիքների արդյունքում, մեծապես տուժեց նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղի բնակչությունը՝ ամառային արտավայրերում սառնամանիքի արդյունքում սատկեց մոտ տասը անասուն:

- Ճիշտ է, ձյունը, որը տեւեց երկու օր մեծ անհարմարություն չբերեց, ամենից շատ տուժեց Հեշտիա գյուղը: Անասունների, որոնք այդ սառնամանիքներին, գտնվում էին բարձրալեռ արտավայրերում, չհասցրին իջեցնել սարերից եւ, ընդհանուր առմամբ, տասից ավելի անասունի կորուստ ունեցանք: Բացի այդ, մունիցիպալիտետում կան նաեւ կարտոֆիլի ցանքադաշտեր: Ջերմաստիճանի կտրուկ անկման պատճառով, բացառված չէ, որ կարտոֆիլի բերքատվությունը լինի սովորականից քիչ:

մեզ հետ հեռախոսագրույցի ժամանակ ասաց Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոստյանը:

Վրաստանի կարտոֆիլագործների ասոցիացիայի նախագահ, ախալքալաքցի Մախարե Մացուկատովը մեզ հետ հեռախոսագրույցում նշեց, որ հացահատիկի եւ կարտոֆիլի բերքն այժմ այն փուլում է, երբ մեծ ցրտերը չեն կարող վնաս հասցնել:

- Երեկվա ցրտահարություններն այդքան հետեւանքներ չթողեցին, որքան հնարավոր է հետո լինի, քանի որ կանխատեսվում են ավելի ուժեղ սառնամանիքներ: Իհարկե, այս փուլում սպասվող ցրտերը չեն ազդի կարտոֆիլի, ինչպես նաեւ հացահատկային մշակաբույսերի բերքի վրա:



Անի Մոստյան



Մախարե Մացուկատով



Հովհաննես Արքախանյան

րը, - ասաց գյուղապետը:

Ամբարեմպաստ եղանակները բացասական ազդեցություն գործեցին նաեւ Թեթրիժարոյի մունիցիպալիտետի առանձին բնակավայրերի գյուղատնտեսական հանդակների վրա: Մասնավորապես, կարկուտը մեծ վնաս հասցրեց մունիցիպալիտետի Սամշվիլի, Դաղեթ, Դուռնուկ, Սամղրեթի, Ջորջաշվիլի, Ասուրեթի գյուղերին եւ Թեթրիժարո քաղաքին:

Սամշվիլի գյուղապետ Ռուդիկ Գալստյանի խոսքով, կարկուտը հիմնականում վնասել է պտղատու ծառերն ու տնամերձ հողամասերը:

- Մունիցիպալիտետի ղեկավարությունը ստեղծել է վնասի հաշվարկման հանձնաժողով, որը ներկայումս սկսել է աշխատանքը: Հուլիսը եմք, որ տարերքից տուժած բնակիչներին կտրվի փոխհատուցում, - հեռախոսակապով «Վրաստանին» հայտնեց Սամշվիլի գյուղապետ Ռուդիկ Գալստյանը:



Ռուդիկ Գալստյան